

Հավելված N 92

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի

գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N:708 հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

<p>1. Ընդհանուր դրույթներ</p>
<p>Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</p> <p>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ, ծածկագիրը՝ 98-3.4-Ղ4-1</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է</p> <p>Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին (այսուհետ՝ Մարզպետ)</p> <p>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ</p> <p>Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:</p> <p>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</p> <p>Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:</p> <p>1.5. Աշխատավայրը</p> <p>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ.Նժդեհի 16</p>
<p>2. Պաշտոնի բնութագիրը</p> <p>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <p>Կազմակերպում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում /այսուհետ՝ Մարզ/.</p> <p>կազմակերպում է ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.</p>

կազմակերպում է Մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի ուսումնասիրության և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը.

կազմակերպում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի լուծմանն ուղղված աշխատանքների մասին տարեկան հաշվետվության և հաջորդ տարում իրականացվելիք միջոցառումների մասին առաջարկությունների ներկայացումը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության համակարգման լիազոր մարմին.

կազմակերպում է Մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի /թրաֆիքինգ/ հիմնահարցերի ուսումնասիրության և գոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև հայտնաբերված գոհերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը նախարարությանը և ոստիկանությանը.

նախարարության միջոցով կազմակերպում է Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առքուվաճառքի /թրաֆիկինգ/ գոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ.

ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ կազմակերպում է իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների /կամ նրանց օրինական ներկայացուցիչների/ հետ աշխատանքների իրականացումը.

կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունը, սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման աշխատանքները.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրի մշակման աշխատանքները, դրանով նախատեսված միջոցառումների իրականացումը, խմբային /բազմամասնագիտական/ քննարկումները.

կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման աշխատանքները.

կազմակերպում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացումը.

կազմակերպում է որդեգրել ցանկացող անձի /դրական եզրակացության հիման վրա/ տվյալների հաշվառումը, գրանցումը, անձնական քարտի լրացումը, ինչպես նաև որդեգրման ենթակա երեխաների անձնական գործի և անձնական քարտի պատճենների ներկայացումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.

կազմակերպում է խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձի /ղրական եզրակացության հիման վրա/ տվյալների հաշվառումը, գրանցումը, անձնական քարտի լրացումը և ներկայացումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.

կազմակերպում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների հաշվառումը.

կազմակերպում է հանրակրթությունից դուրս մնացած երեխաների, մանկուց հաշմանդամ երեխաների, սոցիալապես անապահով ընտանիքների, երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա, գիշերօթիկ հաստատությունում, ցերեկային կենտրոններում գտնվող երեխաների հաշվառումը.

պաշտոնական անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքին և առողջությանը սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում կազմակերպում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությանն անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման աշխատանքները.

հաշվի առնելով երեխայի լավագույն շահը՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում կազմակերպում է առկա տարաձայնությունների լուծումը.

կազմակերպում է Բաժնի աշխատողների մասնակցությունը խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին և դատական նիստերին.

երեխայի կյանքին կամ առողջությանը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում, խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ միաժամանակ կազմակերպում է երեխային ծնողներից վերցնելու, տեղավորելու և դատարան հայց ներկայացնելու աշխատանքները.

կազմակերպում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական ուսումնական հաստատություններում ներգրավելու աշխատանքները.

մանկավարժահոգեբանական կենտրոնի եզրակացության հիման վրա վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, կազմակերպում է այդ երեխաներին ուսումնական հաստատություններում ընդգրկելու գործընթացին հետևելու և աջակցելու աշխատանքները.

մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ քննարկելուց հետո՝ ուղղորդում է համապատասխան հաստատություններ պաշտպանում նրանց իրավունքներն ու շահերը.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կենսապայմանների և սոցիալ-

հոգեբանական ուսումնասիրության իրականացումը, կատարում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու, կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) վերաբերյալ սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) տրամադրած նախնական եզրակացության լրիվ, օբեկտիվ և համակողմանի ուսումնասիրություն և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմում եզրակացություն (երկու օրինակից)՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու, կամ խնամակալ, կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) մասին,

բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում երեխայի խնամքի տրամադրման ողջ ժամանակահատվածում, երեխային ընտանիքում տեղավորելու հնարավորության մասին համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո, կազմակերպում է այդ մասին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին տեղեկացնելը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում,

կազմակերպում է որդեգրել ցանկացող մարզում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուց ստացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և սոցիալական աջակցության տարածքային գործակալության /բաժնի/ կողմից տրված՝ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու վերաբերյալ նախնական եզրակացության հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում որդեգրել ցանկացող անձին որդեգրելու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն տալը

կազմակերպում է խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո և սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) կողմից տրված՝ խնամատար ծնող հաշվառելու վերաբերյալ եզրակացության հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն տալը,

կազմակերպում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու մասին երեխայի ծնողների (ծնողի)

կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի դեպքում, կատարած ուսումնասիրության արդյունքում համապատասխան եզրակացություն (դրական կամ բացասական) տալը՝ դրա մեկական օրինակներն ուղարկելով նաև նախարարությանը և տվյալ ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինն.

Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու հնարավորության մասին առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ այլ փաստաթղթերը սոցիալական աջակցության տարածքային գործակալության (Բաժնի) կողմից ստանալուց հետո, կազմակերպում է խնամքի տրամադրում հայցող երեխայի ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու և սոցիալապես անապահով լինելու դեպքում, ուսումնասիրության իրականացումը բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխային տեղավորելու այլընտրանքային տարբերակները և դրանց բացակայության դեպքում, ներկայացնում գրավոր եզրակացություն երեխային, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ՝ այդ եզրակացությունը և սույն ենթակետով սահմանված այլ փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրելով նախարարությանը,

մինչև երեխայի 18 տարին լրանալը, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից նրա դուրս գրման մասին երեխայի ծնողների (ծնողի) կամ օրինական այլ ներկայացուցչի գրավոր դիմումի դեպքում, կազմակերպում է ուսումնասիրության կատարումը, ինչի արդյունքում տալիս է համապատասխան եզրակացություն՝ դրա մեկական օրինակներն ուղարկելով նաև նախարարությանը և սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնի),

կազմակերպում է ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ դիմումների ներկայացումը դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով.

աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռք բերմանը՝ դրանց բացակայության դեպքերում.

մարզպետին ներկայացնում է տարեկան հաշվետվություն երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին,

կազմակերպում է Բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվության ներկայացումը երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին.

այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

ստորագրում է Բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

Գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, Գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների.

Ըստ անհրաժեշտության, ներկայացնում է համապատասխան զեկուցումներ՝ համապատասխան մարմիններում իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.

Կազմակերպում է Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Մարզպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքների իրականացումը.

Մասնակցում և Կազմակերպում է Բաժնի մասնակցությունը Մարզպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.

Կազմակերպում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքների իրականացումը.

Կազմակերպում է Բաժնի աշխատանքային ծրագրերի կազմման և ներկայացման աշխատանքները.

Իրավունքները՝

Պահանջել և ստանալ անհրաժեշտ իրավական ակտեր

Համապատասխան մարմիններից պահանջել ներկայացնել հիմնավորումներ, փաստաթղթեր, ամբողջական տեղեկատվություն և նյութեր

Համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ

Շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների հետ կազմակերպել մասնագիտական քննարկումներ

Համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ կարծիքներ և առաջարկություններ

Մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների շարունակական զարգացման գործընթացին՝ վերապատրաստումների միջոցով

Մասնակցել միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված գիտաժողովների, սեմինարների, աշխատանքային քննարկումների

Պարտականությունները՝

ուսումնասիրել ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը, կազմել ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված տեղական ծրագրեր

ուսումնասիրել Մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը, մշակել տեղական ծրագրեր.

Կազմել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի լուծմանն ուղղված աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն և հաջորդ տարում իրականացվելիք միջոցառումների մասին առաջարկություններ ներկայացնել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության համակարգման լիազոր մարմին.

ուսումնասիրել Մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի /թրաֆիքինգ/ հիմնահարցերը, զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր մշակել, ինչպես նաև հայտնաբերված զոհերի վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն նախարարությանը և ոստիկանությանը, նախարարության միջոցով կազմակերպել Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առքուվաճառքի /թրաֆիկինգ/ զոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ.

ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ իրականացնել աշխատանքներ իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների /կամ նրանց օրինական ներկայացուցիչների/ հետ.

իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, մշակել անհատական սոցիալական ծրագրեր, իրականացնել սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումներ, կազմակերպել խմբային /բազմամասնագիտական/ քննարկումներ.

իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման աշխատանքները.

հաշվառել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.

հաշվառել որդեգրել ցանկացող անձի /դրական եզրակացության հիման վրա/ տվյալները, գրանցել, անձնական քարտը լրացնել, ինչպես նաև որդեգրման ենթակա երեխաների անձնական գործի և անձնական քարտի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.

հաշվառել խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնաձև անձի /դրական եզրակացության հիման վրա/ տվյալները, գրանցել, անձնական քարտը լրացնել, ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

իրականացնել մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների հաշվառումը:

իրականացնել հանրակրթությունից դուրս մնացած երեխաների, մանկուց հաշմանդամ երեխաների, սոցիալապես անապահով ընտանիքների, երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա, գիշերօթիկ հաստատություններում, ցերեկային կենտրոններում գտնվող երեխաների հաշվառումը:

իրականացնել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանություն՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում լուծել առկա տարաձայնությունները, ապահովել բաժնի աշխատողների մասնակցությունը խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին և դատական նիստերին:

իրականացնել հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական ուսումնական հաստատություններում ներգրավելու աշխատանքներ:

կատարել ուսումնասիրություն և տալ եզրակացություն՝ երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու մասին, դրանց մեկական օրինակներն ուղարկել նախարարություն և գործակալություն:

աջակցել երեխաների ծննդյան վկայականների ձեռք բերմանը՝ դրանց բացակայության դեպքերում:

ներկայացնել տարեկան հաշվետվություն մարզպետին երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին,

ներկայացնել Բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվություն երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
2	Ոլորտ	Կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության կամ սոցիալական բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

(3.3 կետը փոփ. 27.02.2020թ. N:236 հրաման)

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

- Բանակցությունների վարում
- Փոփոխությունների կառավարում
- Կոնֆլիկտների կառավարում
- Հասարակության հետ կապերի ապահովում
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3.

Գործունեության

ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4.**Շփումները****և****ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: